

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՆԵԽԹԵՐ ԹՈՎՄԱ. ՄԵԾՈՓԵՑՈՒԿ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ^{*)}

Թովմա Մեծոփեցին ժԵ. դարու հայ վարդապետների մէջ առաջնակարգ տեղ է բռնում իրրե մատենագիր, եկեղեցու պաշտօնիայ և վարժապետ։ Տարաբաղդաբար այս բազմաշխատ և արդիւնաւոր վարդապետի մասին ամփոփ և ամբողջական մի ուսումնասիրութիւն չկայ նրա կեանքի մանրամասնութիւններով, գրական և վարժապետական գործունէութեան գնահատութեամբ, Ներկայիւս նպատակ չունինք այդ թերին լրացնել ընդարձակ մտքով, այլ՝ մեր նոր հրատարակած նիւթերի առթիւ ամփոփելով և հսերը՝ տալ միայն նորա կենսագրութեան ուրուագիծը։

Թովմա Մեծոփեցին վասպուրականի Քաջբերունեաց Աղիկամ Աղիովիտ գիւղիցն էր, ազնուական տոհմից, Ստեփանոս և Շամշա ամուսինների որդին^{**}։ Նորա հօրեղբայրն էր Մկրտիչ քահանայ և Մկրտիչ միայնակեաց^{***}. եղբայրներն էին Յովհաննէս քահանանայ, Յովհաննէս, Արիստակէս, Գորգի մելիք, որ Աղի գիւղի մելիքն էր, Ամիր մելիք, Սուլթանշա^{****}, Ունէր և մի քոյր, որի անունը յայտնի չէ. սորա որդին էր Ծերուն, որ ուսել էր առ ոսութովմայի և 1446 թուին՝ կիրակոս վիրապեցու աքսորման ժամանակ՝ գտնում էր էջմիածնում իւր մօրեղրօր մօտ։ Գորգի մելիքի կինն էր Սալշուկ և սրանց զաւակներն էին Յովհաննէս քահանայ կամ կրօնաւոր, պարոն Գրիգոր, Ստեփանոս և Մինաս Խալիֆա^{††}։ Իրրե եղբօրորդիք յիշւում են նաև Ներսէս, Կարապետ, Վրդանէս,

*) Տես Արարատ 1915. օգ.—սեպտ. 758—767.

* Կիրակոս Բանասէր. Արարատ. 1915. օգ.—սեպտ. 745. Նոր նիւթեր Թովմա Մեծ. կենսագր. Արարատ 754. 761. 762. Փիրղալէմեան. Նոտարք Հայոց 147.

** Նոր նիւթեր Ար. 755. 761. 765.

*** Նոր նիւթեր Ար. 754. 757. 761. 765. Գորգի Մելիքի մասին տես նաև Թովմայի Պատմ. Լանկթամուրայ. Փարիզ. 1860. 95. Նոր նիւթեր. Կիրակոս Բանասէր. Ար. 745. 749. Ար. 751. Յովհաննէս եղրօր մասին. Պատմ. Լանկ. 48. Արիստակէսի մասին Պատմ. Լանկ. 111.

† Նոր նիւթեր Ար. 760. 761. Թովմա Մեծով. Յիշատակարանը. Առստանեանց, Թիֆլիս. 1892. 80.

†† Փիրղալէմեան. Նոտարք Հայոց. 147. Նոր նիւթեր. Ար. 764.

Ստեփանոս կրօնաւոր, որդի Ամիր մհլիքին. չորս սարկաւագներ՝ Եւառշա, Ապտլմսեհ, Ծերուն (Թովմայի քրոջ որդին), Աքանդար, Աւելի փոքր են իրքնդեռաբոյս պատանիներ (1435 թուին)` Յակոբ, Նասրատին, Մելքիսէթ, Մխիթար, Սարգիս և Յոհաննէս*:

Թովմայի ծննդեան տարին միայն մօտաւորապէս կարող ենք որոշել: Կիրակոս Բանասերի կենսագրականից մեղ յայտնի է, որ նա վախճանուել է խորին ծերութեան հասակում, «ի թվականութեանս Հայոց ՊՂ»», «ի մայիսի ժե, յաւուր կիրակէի Երևման Խաչին**»: Հինգ տարի առաջ «ի թվականիս մերոյ ՊՂ», Թովման մի յիշատակարանի մէջ յայտնում է, թէ գրել է «ի ծերութեան ժամանակիս»***, Նոյն կիրակոսի ասելով՝ վաթուն տարի Թովման ապրել է Մեծոփայ վանքում. սորա վերան աւելացնենք մանկութեան 7—10 տարիները վանք գալուց առաջ, նորա կեանքի տեղուղուղիւնը կլինի մօտաւորապէս 67—70 տարի և ծնուած 1376—1379 թուին, հակառակ Շահնազարեան կարապետ վարդապետի, որ Թովմայի կեանքի տեղուղութիւնը 57 տարի է համարում†:

Թովմայի մանկութեան ամենահին յիշողութիւնը կապուած է Լանկթամուրի առաջին արշաւանքի հետ՝ ՊՂ(=1387) թուականին. Քաջրերունեաց երկրի ժողովուրդը խոյս տալով նորա զօրքերից, փախչում է Տարօն: Մեծոփայ վանքի Ստեփանոս վարդապետի և Ներսէս եպիսկոպոսի յորդորներով այս փախուստը փոխարկում է մի մեծ ուխտագնացութեան դէպի ս. կարապետ, որին մասնակից էր և մանուկ Թովման: Մինչդեռ Յուսուփի հրամանով՝ Խութայ շէլս Շարաֆը կողոպառած ժողովրդին բանութեամբ դէպի Մարութայ սարն էր քշում, Փիր Հասանի և Թամուրի զօրքերը հանդիպում են իրար: Հանգամանքից օգտում է տարագիր ժողովուրդը և փախչում դէպի ս. կարապետ և Մուշտիքանց մէջն էր և Թովման††:

Մանկութեան ուսումը Թովման ստանում է Մեծոփայ վանքում Յովհաննէս Մեծոփեցու մօտ: Այս մասին շատ տնգամ է յայտնում Թովման իւր Պատմութեան††† և յիշատակարանների մէջ†*, բայց աւելի որոշ յիշում է նորա կենսագրութեան հեղինակ կիրակոս վարդապետը. «ի տղայութեան սնեալ և ուսեալ ի սուրբ ուխտն Մեծոփայ՝ ի դուռն սուրբ Աստուածածնին, առ ոտոս վար-

* Նոր Նիւթեր. Ար. 764. Փիրդ. Խօտ. Հայոց 147:

** Նոր Նիւթեր. Ար. 758. 748:

*** Նոր Նիւթեր. Ար. 767:

† Պատմ. Լանկթամուրայ եր. 56:

†† Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 21, 22, 25, 25:

††† Անդ. 55, 60, 61. †‡ Նոր Նիւթեր. Ար. 762.

դասլետին Յովհաննու՝ շինողի սուրբ տաճարիս և վարժեալ և ուսեալ
ամինայն երաժշտական արուեստ ուսմանն ի վանքն»*: Տարա-
քաղդարար այս խօսքերը շատ քիչ են և անորոշ թովմայի ման-
կութեան ուսման մասին պարզ և թանձրացեալ գաղափար կաղ-
մելու: Բայց կարելի է կարծել, թէ շատ մեծ բան չպէտք է լինէր,
ժամադիրք, Սաղմոս, Շարական, Աւետարան և Ժամերգութեան
հետ կապուած երաժշտական ուսումն: Նորա ուսուցիչ Յովհաննէս
Մեծոփեցին նոյն վանքում «վարժեալ և ուսեալ» էր Նահապետ
կրօնաւորի մօտ «զՍաղմոսն Դաւթի և դմանը ուսումն եկեղեցւոյ»,
և այդքանը բաւական էր համարուած քահանայական աստիճանի
կոչուելու**: Համեմատութեան այս ճանապարհով մօտաւոր գա-
ղափար ենք ստանումնակ թովմայի նախնական կրթութեան ծա-
ւալի և բովանդակութեան մասին:

Ո՞ր թուականին է մտել նա վանք և ո՞րքան է տեսլ նորա-
նախնական կրթութեան այս շրջանը, միայն մօտաւորապէս կա-
րող ենք որոշել: Մենք կ'տեսնենք, որ թովմայի ուսման երկրորդ
շրջանը Սուհարայի վանքում վերջացել է ՊԾԵ (=1406) թուին
վարդան վարդապետի մահուամբ և տեսլ է 12 տարի***: Այս թուից
12 տարի յետ հաշուելով Մեծոփայ վանքի կամ նախնական կըր-
թութեան վերջին տարին կընկնի ՊԽԳ (=1394) թուին: Եւ յիրաւի
այդ տարին թովման դեռ ևս Յովհաննէս Մեծոփեցու մօտ էր. Լանկ-
թամուրի երկրորդ արշաւանքի ժամանակ, որին ենթարկուեցան
պատանի թովման և նորա ուսուցիչ Յովհաննէս Մեծոփեցին Քաջ-
ըերունեաց զաւառի ժողովուդի հետ, և փախան Կոկովիտ գաւառի
Դարա գիւղը: Նոքա թէև վերադարձան շուտով, բայց հետեւեալ
տարին Յուսուփի յարձակման ժամանակ «Վարդապետն Յովհան-
նէս աշակերտօք իւրովք մազապուրծ եղեալ, գնաց ի գաւառն Ռըշ-
տունեաց. զերկու ամ անդ դադարեաց»†: Թովման այս փախս-
տեան ժամանակ աշակերտների թուում չէր այլ ևս. ապա թէ ոչ
կ'յիշէր այդ մասին, ինչպէս ուրիշ դէպքերում: Ահա Յովհաննէս
վարդապետի այս երկամեայ փախստեան ժամանակ թովման պէտք
է անցած լինի Սուհարայի վանքը Սարգիս Սորբեցու մօտ ուսա-
նելու: Ուրիշ աղբիւրներից էլ գիտենք, որ այս վարդապետն ևս
Լանկթամուրի երկրորդ արշաւանքի ժամանակ փախել էր Լիմ ա-

* Նոր Նիւթեր. Ար. 745:

** Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 54:

*** Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 41: 49—50. Նոր Նիւթեր. Կիրակոս
Բանասէր. Ար. 744:

† Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 47. 49:

նապատը և Պի՛թ թուին այնաեղ էր^{*}, բայց, երեի, նոյն թուականի վերջերին կամ Պի՛թ թուի սկզբներին դարձել էր կրկին իւր վանքը և լստ թովմայի Պի՛թ—ՊԾԵ խաղաղութեան տարիներէին. «Եւ անօրէնն Յուսուփ փախեաւ ի Զաղաթայէն յ844 թուականէն մինչև յ855, այլ ոչ կարաց գալ յաշխարհս մեր»: «Եկին ամենայն ցրուեալքն և սկիզբն արարին շինութեան: Եւ ծաղկեցաւ ուսումնականօքն ի ձեռն խաղաղութեան ողորմութեամբն Աստուծոյ մետասան ամ ծովարոլորս»: Խաղաղութիւնը խանգարւում է ՊԾԵ (=1406) թուին. անօրէնների հալածանքից փախչում է Արդգիս Սորբեցու յաջորդ Վարդան վարդապետը «յերկիրն Տոսպ», «ի սուրբ ուխտն Սալսապատին», ուր և վախճանւում է^{**}: Այս տեղեկութիւնները միանգամայն հաստատում են, թէ Թովման Պի՛թ թուականին արդէն Սուհարայում պէտք է լինէր, որով և լրանում է նորա 12 ամեայ ուսման շրջանը այնտեղ՝ Կիրակոս Բանասէր վարդապետի տուած տեղեկութեան համեմատ: Մեծոփայ վանքի կամ նախնական կրթութեան շրջանի վերջին տարին, ուրեմն, Պի՛թ (=1294) թուականն էր:

Այժմ գտնենք առաջին տարին: Թովման վարդապետական աստիճան է ստացել Գրիգոր Տաթևացուց ՊԾԹ (=1420) թուի ձմրան սկզբին և այնուհետև վարժապետութիւն արել 35 տարի մինչև իւր կեանքի վախճանը: Գաւազան ստանալուց առաջ մի տարի ուսել է Մեծոփայ վանքում և երկու տարի Տաթևում Գրիգոր Տաթևացու մօտ^{***}: Այս 38 տարիների վերայ աւելացնելով Սուհարայի շրջանի 12 տարին, ընդամենը կլինի 50 տարի. իսկ, արդ, Թովմայի կեանքը Մեծոփայ վանքը մտնելուց մինչև մահը 60 տարի է տևել, որով մանկական շրջանի ուսման համար կմնայ տաս տարի, ՊԼ՚Ի—Պի՛թ (1385—1395) թուերը:

Յովհաննէս Մեծոփեցու հետ՝ իրեկ իւր մանկութեան ուսուցչի և հոգևոր հօր՝ Թովման յիշում է և Մատթէոս ոմն կրօնաւորի, որ 1410 թուին օգնել է Թովմային, պատրաստելով «զնիւթս քարտիսի», մեր Մատենադարանի № 2103/2065 ձեռագրի գրութեան ժամանակ, բայց մանրամասնութիւններ նորա մասին չ'գիտենք†:

Համեմատաբար աւելի տեղեկութիւն ունինք Թովմայի ուսման Սուհարայի կամ Երկրորդ շրջանի մասին: Այստեղ սկզբում նա սովորել է Սարգիս Սորբեցի նշանաւոր վարդապետի մօտ, որ Յոհան Ո-

* Փիրդալէմեան. Նօտարք Հայոց. Կ. Պօլիս. 5,

** Մեծոփեցի Պատմ. 49. 50. 41.

*** Նոր Նիւթեր. Ար. 755/4. Մեծոփեցի. Պատմ. 60. 55 Կիրակոս Բանասէր. Ար. 744/5:

† Մեծոփ. Պատմ. 46. Նոր Նիւթեր. Ար. 755, 756. 761:

բոտնեցու աշակերտներից էր և հաստատուած էր նախ Աստապատում և տպա Սուհարայի կամ Խառարաստայ վանքում՝ ՊԼ.՝ ՊԾԱ. թուականը։ «Եւ ժողովեցան առ նա բազումք ի զրոց աշակերտաց և ի կրօնաւորաց և յուսումնասիրաց աւելի քան 60 կարդաւորք և ուսումնականք»*։ Նորան աշակերտութեան է գալիս և Թովման ՊԽԴ(=1395) թուին, արդէն 17—20 ամեայ պատանի։ Սարդիս վարդապետը մեռնում է ՊԾ—ՊԾԱ. թուականին և նորան յաջորդում է իւր իսկ աշակերտներից Վարդան մինչև ՊԾԵ թուականը, երբ հալածուելով թշնամիներից՝ վախչում է Սալնապատու վանքը և այնաեղ վախճանւում։** Թովման գովասանքով և երախտագիտութեամբ է յիշում Սուհարայի ուսուցիչներին, առանց տեղեկութիւններ տալու իւր ուսած առարկաների մասին։*** Այդ թերին լրացնում է Կիրակոս բանսէրը, յայտնելով, թէ նա այնաեղ ուսել է «զ՞ի եղանակս վարդապետական, որ է սահմանական, բաժանական, ապացուցական, վերլուծական», հետեղութեամբ Արիստոտէլի, ինչպէս որդեգրած էին Փ. դարու Հայոց վարդապետները, գլխաւորապէս Տաթևի դպրոցի ներկայացուցիչները։ Թովմայի աւագ ժամանակակից Յակոբ Ղրիմեցին, օրինակ, իւր տօմարական մակացութիւնների «Յաղագս թուականի» գլխի մէջ նոյն եղանակն է գործադրում։ Այս տեղեկութիւնից երեսում է, որ Թովման իւր փիլիսոփայական հմտութեան մի մասը, որ թուում է Կիրակոս, մասամբ այստեղ էր ստացել։

Թովմայի ուսման երրորդ շրջանին ընկնում է ՊԾԶ—ՊԾԹ թուերին։ Վարդան վարդապետի մահուամբ՝ ՊԾԵ թուին՝ որը են մնում նորա աշակերտները։ Դոցանից 12 հոգի, որոնց թուում և Թովման, գնում են Տաթև, որ այդ ժամանակ արևելեան Հայաստանի լուսաւորութեան առաջին կեղրոնն էր Գրիգոր Տաթևացու վարժապետութեամբ։ Ժամանակի եպիսկոպոսն էր տ. Առաքել, Տաթևացու քրոջ որդին և աշակերտը, ինքն էլ բանսէր և «իմաստասէր», յայտնի իւր տաղերով, քերականութեամբ և Սահմանաց գրքի լուծմունքով։ Տաթևացու շուրջն էին խմբուած այդ ժամանակ 60-ից աւելի աշակերտներ, որոնցից մի քանիսը նշանաւոր հանդիսացան մեր պատմութեան և գրականութեան մէջ։ Դոցա վերայ աւելանում են և Քաջրերունեաց երկրից եկած երիտասարդները։ Տաթևացին մեծ սիրով ընդունում է ուսումնատենչ երիտասարդներին, որ իւր հայրենակիցներն էին. «զի հայր նրա

* Նոր նիւթեր. Ար. 755. 751₂ Մեծովեցի Պատմ. 50—55.

** Մեծովեցի. Պատմ. 47. 55—57. 49. 41.

*** Բացի նախընթաց ցուցումներից տես եւ Նոր նիւթեր. Ար.

էր իգաւառէն Քաջրերունեաց ի քաղաքէն Արճիշոյ: Թովման այս
գէպքերի մասին պատմում է թէ իւր պատմութեան և թէ Պօթ
թուականին զրած մի ընդարձակ յիշատակարանի մէջ: Զեռքի
տակունինք և թովմայի 12 ընելներից մէկի՝ Սարգիս Սահմա-
պատեցու մի յիշատակարանը, վերջին երկուոր մեր նոր Նիւթե-
րի մէջ առնուած*, Երեք աղբիւրների մէջ ևս յիշուած են 12 ա-
շակերտների անունները լրութեամբ կամ մասնակի. ըստ Պօթ
թուի յիշատակարանի գոքա են. Սարգարէ վարդապետ, Յակոբ
վարդապետ, Յովհաննէս վարդապետ Փափչէնցի, միւս Յովհաննէս
վարդապետ, Կարտովետ վարդապետ, Մկրտիչ Նահապետնց, Մկրտիչ
Օրբէլինց, Մկրտիչ Հողձեցի, Ղազար Մահդասենց, Խովմա, Ղազար
Աղթամարցի, Մելքիսեդեկ Բերկրցի, Սարգիս: Պատմութեան մէջ
յիշուած են բացի ոսցանից դարձեալ երկու անուններ՝ Մաթէնս
և Կարտովետ: Սարգիսը կրկնում է միայն թումայի (Մեծովեցու),
Մկրտչի (Նահապետնց), Ղազարի (որը), Մելքիսեդի, Երկու
միւս Մկրտչի (Օրբէլինց և Հողձեցի) և միւս թումայի անուն-
ները, որոնց իւր համեմատութեամբ առագ և երէց ամենայն
իրօք» է կոչում: Մենք հարկ համարեցինք յականէ յանուանէ յիշել
զրանց անունները, որովհետեւ մի քանիսների համար հաստա-
գիտնք, որ գաղափարակից հանդիսացան թովմային հայրապե-
տական Աթոռի էջմիածին փոխադրութեան մէծ գործում և այս-
պէս կամ այնպէս հետք թողին մեր պատմութեան մէջ***: Այստեղ

*. Ήδονήθη, Φωτιφ. 50—51. Έπρ. Βιβλίον. Αρ. 753, 755/6, 752.

** Այդպիսիներն են. Տ1 ուժուած աղքատական համար և աղքատական համար

4. Կարապետ վարդապետ, որ ցեսոյ Խառարաստայ վանքի վանահայր
դարձաւ, նոյն վանիրի Զարէոս եպիսկոպոսի եղբօրորդին էր. • ՊԿԵ (== 1416)
Թուին Երուսաղեմում պնել էր մի աւետարան, որ Ս. Առուածածնայ (Խա-
ռարաստայ) վանիրին նուիրեց. ՊԿԷ (== 1417) Թուին Յակոբ զրցին պրել է
առել Տաթեւացու քարոզները «յերկու հատորաց» (№ 2455/2443). ՊԶԵ
(== 1456) Թուին բաղդակից եղաւ Թովմային Շահնուհի և Արանդարի շա-
հատակութիւնների ժամանակ՝ փախչելով Բաղէշի կողմերը. • ՊԴ. (== 1441)
Թուին մասնակից եղաւ հայրապետական Աթոռի էջմիածին փախաղրութեան
և Կիրակոսի ընտրութեան ժողովներին. ՊԴ. (== 1456) Թուին մի յիշա-
ժակարտան Թաւագրուած է Թովմա Մեծափեցու և այս Կարապետ վարդա-
պետի անունով իբրեւ Քաջընթաց երկրի նշանաւոր մարզկանց. • ՊԳ.Ը
(1449) Թուին խաչարձան է կանգնում իւր հօրեղբօր Յովաննէս հերապետի
համար. • ԶՊ (== 1454) Թուին Խվեատիս արեղան առ ոտու այս օամենաղով
և հանճարեղ, իմաստուն և արդիւնաւոր Կարուպետ Բարունապետից
դրում է Կաթ. Թղթերի մելքոնւնութիւնը. Տես. Փիրզ. Խօնարք 3 + 49/50.
408. 455. 460. 475. Կոստանեանց. Թովմա Մեծով. Յիշանակարանը. 32.

Թովման իւր ընկերների հետ մնում է երկու տարի հռչակաւոր վարժապետի մօտ. «և սկսաւ ուսուցանել (Տաթեացին) զգիրս սրտաբին իմաստասիրացն» եւ ապա զչորեքտապան թուղթան Պողոսի առաքելոյն և զԱռորս գիրս աստուածաբանին Գրիգորիա: Մենք միջոց ունինք մասամբ գաղափար կազմելու այս դաստիօն սութիւնների մասին. որովհետեւ անոնք գրի են առնուած և մեր

Զեռ. Մատ. Ա. Էջմ. № 2455/2445 յիշատակարաններ 405• 275ա• 299ա• 378բ• 452ա, 486բ—487բ:

2. Մկրտիչ Ամանպետենց (հօր անունով), կոչում է եւ Մեծոփեցի, իր ամրող կեանքում Թովմայի գործակիցը լինելով նոյն վանքում, Թովման եւ առ իրենց յիշատակարանների մէջ փոխադարձաբար իրար «հոգեւոր հարադար» ևն անուանում: ՊԿ: (=1417) Թուին երուսագէմից վերադարձին նետք բերում է Մեկնաւթիւնների մի ժողովածու (մեր մատենադարանի № 1429/1419), որպէս զի դաս ասեն նորա վերայ եւ Թովման առաջինն է, որ կատարում է նրա փափազը: ՊԶԱ. (=1452) Թուին այս Մկրտիչը (Փիրդ. եր. 401• ծան. 2, շփոթում է սորան Օրբելեանցինեւո), Թովման եւ սորա աշակերտ Յովհաննէս եպիսկոպոսը Աստուածատուր վարդապետի դամբարանի վերայ զերեզման են շինում: ՊԶԹ (=1440) Թուին Ներսէս զրիչը խնդրում է յիշել «եւ երկրորդ երախտլորին (առ աջինը իւր ուսուցիթովման է) իմայ հոգեւոր հօրն Մկրտչ վրապի»: ՊՂ Թուականին սա եւս մասնակից էր Էջմիածնի ժողովին Թովմայի հետ իրրեւ Մեծոփայ վանքի ներկայացուցիչ: Տեռ. Նոր Նիւթեր. Ար. 756, 757, 759, 765, 765, 2եռ. Ա. Էջմ. Մատ. № 1429/1419, 81ա• 201բ• 265ա. յիշատակարանները: Փիրդ. Նօտարը 100• Առատանեանց• Թովմա Մեծ. Յիշատ. 52.

5. Մկրտիչ վարդապետ Օրբելենց. Թովմայի «օփելելին»: Տ. Յուսկան վանահայրը. որ կոչուած է նաեւ Բերկրցի: Սորա հայրն էր Օրբէլ, ուստի եւ «օրբէլինց» է կոչում Թովմայի կողմից եւ մայրը Գովլաթ: Կիրակոս Յանասէրը սրան անուանում է «Մկրտիչ վարդապետ Աւղուլքէնց», իսկ Գաւիթ Բաղիշեցին «Ողբեկենց»: Նա ՊԿ: (=1444) Թուին զրել է տուել Տաթեւացու Սաղմոսաց մեկնութիւնը: ՊԿ: (=1448) Թուին ուն Յակոբ գրիչ, որ Տ. Յուսկան անտպատում զրել է մի ծաղկազարդ աւետարան, յիշել է խնդրում եւ «զերախտաւոր հայրն մեր զՄկրտիչ վարդապետ, առ աջնորդ սուրբ ուխտիս», ՊԿ: (1420) Թուին Մկրտիչ վարդապետն ինքը զրել է մի աւետարան, մի երկրորդը ՊՀԴ: (=1425) Թուին, ՊԶԱ. (1452) Թուին զրել է տուել մի Աւաշոց Կարապետ «հանճարեղ եւ իմաստուն քարտուղարի» ձեռովք: Յիշատակարանի մէջ իրեն անուանում է «անարդս ի պարս վարդապետաց». յետինս ի քարոզողաց... Մկրտիչ սոսկ անուն վարդապետա»: Սա եւս ՊԾԹ (=1440) Թուին Թովմայի հետ հետեւում է Տաթեւացուն Սա կրկին վերադարձը Մեծոփի յաջողեցնելու եւ մասնակից լինում Յովհաննէս Մեծոփեցու Թաղմանը Հաւուց Թառում: Տես. Փիրդ. Նօտարը 55.

ձեռքն են հասել: Դրանց նիւթը իւրացրել էր Գրիգոր Տաթևացին մասամբ իւր ուսուցիչ Յոհան Արոտնեցուց և մասամբ իւր աշխատանքի պտուղն էր, այսպէս են Պորփիրի, Արիստոտէլի Ստորոգութեանց, Պերիարմենիասի Լուծմունքները. իւրն է միայն «Առորո»-ի մեկնութիւնը: Վերոյիշեալ Փիլիսոփայական մեկնութիւնների յիշատակարանից իմանում ենք, որ նա գրել է 1383 թուին «ի խնդրոյ ոմանց նորին աշակերտաց»*: Տպաւորութիւնը մեծ էր Թովմայի և իւր ընկերների վերայ. «Եւ ապշեցոյց զամենեսին առաւել քան զիմաստունս հելլենացւոց», գրում է նա իւր պատմութեան մէջ: Երկու տարի Թովման մնաց այնտեղ իւր ընկերների հետ. ապա Տաթևացին ստիպուած եղաւ փախուստ տալ և հաստատուել Մեծոփայ վանքում, հետը բերելով Թովմային և իւր ընկերներին**: Մեծոփիցիք իրենք են զիմում մեծ վարդապետին վանքում հաստատուելու. «զի ժողովեցան առ նա ամենեքեան քահանայք և տանուտէրք և լալով և աղաչելով արգելեցին», գրում է Սարգիսը իւր յիշատակարանի մէջ***: Ժամանակի վանահայրը Յովհաննէս Մեծոփեցին էր, Թովմայի մանկութեան ուսուցիչը, որ նոր էր շինել իւր վանքը: Եկեղեցու նաւակատեաց հանդիսին

70• 79• 401• 449• 422: Նոր Նիւթեր. Ար. 756 759, Կիրակոս Յանասէր 744, Թովմա Մեծ. Պատմ. 64, Յակոբ Թօփինեան, Զեռապրաց Յուցակ Խաչիկ վ.ի Դադեան. Վաղարշապատ. 4898• 62, 98.

4. Մելքիսէթ վարդապետ. Տես Նօտարը 61• 70.

5. Մարդարէ վարդապետ. Նօտարը 65. Մեծոփ. Պատ. 52.

6. Ղազար Աղթամարցին. Նոր. Նիւթեր. Ար. 760. Թովմ. Մեծոփ. Պատմ. Աանկ. 44. Նա եւս մասնակից եղաւ 444 թուի ժողովին. Կոստ. Թով. Մեծ. Յիշատ. 52.

7. Սարգիս Սալնապառեցի, որի յիշատակարանը ՊԾԸ (= 1409) թուի յիշեցինք. Նոր Նիւթեր. Ար. 750• Սա եւս մասնակից եղաւ 444 թուի ժողովին եւ զերմ պաշտպան էր Կիրակոս Վիրապեցու. Կոստ. Թովմա Մեծ. Յիշատ. 52• 84. Առաքել Դաւրիժեցի. Պատմ. Վաղարշ. 4896• 628. Համեմ. Փիրդակ. Նօտարը 150.

8. Յակոբ վարդապետը հաւանօրէն Ովսաննացին է, որ Թովմայի հետ աշակերտել էր Յովհաննէս Մեծոփիեցուն եւ ապա Տաթեւացուն. Նա նահատակուեցաւ 1428 թուին քրդերի ծեռքով: Առաջ քրոջ որդին էր Տ. Ածատուր եպիսկոպոս, «քաջ քարտուղար», որ զրեց Մկրտիչ Նաղաշի կեանքը: Թովմա Մեծոփ. Պատմ. 45• 52• 64• Զեռ. Մատ. Ա. Էջմ. Գ. № 276/548• 242ա.

* Մեր մատ. Զեռ. № 4834/1924.

** Մեծոփ. Պատմ. 54/21

*** Նոր Նիւթեր. Ար. 754:

ներկայ եղաւ և Տաթևացին իւր ութսունից աւելի աշակերտներով և 11 վարդապետներով։ Բոլորին խնամողը Յովհաննէս Մեծոփեցին էր։ «Եւ կերակրէր զամենեսեան հացիւ եւ հանդերձիւ»։ «Իսկ վարդապետն Յովհաննէս անձառելի ուրախութեամբ զուարձանայր և ի սպասու կայր պիտոյիցն պակասութեան եւ ասէր առ Քրիստոս։ Տէր Յիսուս, իս զմայրն քո պատուեցի (տաճարի շինութեամբ), դու զիս պատուեցեր վարդապետօք և հոգևոր հօր իմով (վարդապետական աստիճանը Տաթևացուց էր ստացել Որոտնեցու հրամանի համեմատ) և գրոց աշակերտաւք, գրագրաւք և ճգնաւորօք և ճշմարիտ ուսումնականաւք»։ Գնահատութեան արժանի խոռքեր քանիցս բարբարոսների ասպատակութեան ենթարկուած վանահօր բերանում։ ԺԴ և ԺԵ դարերի, Հայաստանի այս թշուառութեան շրջանի, հայ վարդապետների մէջ խորին յարդանաց արժանի դէմքեր ունինք՝ ուսումնասիրութեան, անձնուիրութեան և տոկունութեան հոգւով լցուած։ Այս հոգին էր, որ հայ եկեղեցու և ժողովրդի մէջ գրի ու գրականութեան կրակն անշէջ պահեց, որքան և թշուառութեան երեսից մոխրով ծածկուած։ Այսպիսի վարդապետներից մէկն էր Յովհաննէս Մեծոփեցին*։

Տաթևացին այստեղ մնում է մի ամբողջ տարի։ «Եւ զերիս գիրս մեկնեաց դասիւ՝ զԱւետարանն Յովհաննու աւետարանչին, զզիրս Յորայ նահատակին եւ զգիրս գրչութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ Լամբրոնացւոյն եւ Սրիստակէսի»**։ Նոյնը կրկնում է Թովման իւր ՊԾԹ թուի յիշատակարանի մէջ, աւելացնելով միայն, թէ նա Յովհաննու աւետարանը մեկնել է «մինչ յայն տեղի, որ ասէ. Յառաջագոյն ք զտօն զատկին», այսինքն մինչև Յովհ. ԺԴ., որովհետև Գրիգորի աշակերտները Տաթևից գալով՝ «գողացան զնա ի գիշերի»***։ Սարդիս Սալնապատեցին էլ վկայում է իւր յիշատակարանի մէջ երեք գրքերի մեկնութեան մասին և աւելացնում, թէ նորա ունկնդիրների թիւն էր «Ճկ արեղայ, և լ վշտպ և այլ միակեցունք»†։ Հէնց այստեղ էլ Տաթևացին գրի է առել իւր դասախոսութիւնները և յիշատակարանի համեմատ նուիրել «ի պատիւ սուրբ տեղւոյս (Մեծոփայ վանքի) ուսումնասէր անձանց»։ Դորա սկզբնագիրը կամ իսկական օրինակը գտնուում է Մ. Աթոռում № 1175/1115) և գրուած է «ի թվիս ՊԾԸ. յունիս ԺԴ»։ Այդ յիշատակարանի համաձայն Տաթևացին Մեծոփայ վանքն է մտել ՊԾէ թուին և ձմերել այնտեղ††. ասել է, թէ նա եկել է ՊԾէ թուի ամրան վերջերին և հեռացել է ՊԾԹ թուի աշնանը՝ մի տարուց աւելի մնալով Մեծոփում։

* Մեծոփ. Պատմ. 52/55. 59: ** Անդ. 52: *** Նոր Նիւթեր. Ար. 755: † Անդ. 754: ‡ Համեմատել. Խօտարք. 29:

Տաթևացու Մեծոփից հեռանալու շարժառիթները մեկ յայտնի չեն: Թովման թէ իւր Պատմութեան և թէ ՊԾԹ թուի յիշատակարանի մէջ յայտնում է, թէ աշակերտներն ին ծածուկ փախցրել: Բայց դժուար կարելի լինէր իրազործել այդ փախուստը «սիրելի» աշակերտների կողմից՝ առանց Տաթևացու համաձայնութեան: Ամենայն հաւանականութեամբ գործին մասնակից էր և Առաքել եպիսկոպոսը. Տաթևից յետոյ եկած աշակերտները մի առ ժամանակ Մեծոփում մնալուց յետոյ՝ «գաղտագողի առեալ դնացին» Սաղմոսավանքի Յակոր վարդապետի մօտ, որ իրենց ուսուցչի «հոգևոր հարազատն» էր, այսինքն աշակերտակիցը: «Եւ մեք ելեալ դնացաք զկնի ն՝ ը, հն՝ դձ վարդապետաւք եւ եպ՝ սաւք և գրոց աշակերտաւք և հասաք նմա յերկիրն Այրարատեան, լալով, ողբով, արտասուօք և աղիողորմն կոկծանօք» գրում է Թովման ՊԾԹ թուի յիշատակարանի մէջ. բայց համոզել և յետ դարձնել չյաջողուեց: Վարդապետների մէջ էին Յովհաննէս Մեծոփեցին, Մկրտիչ (Նահապետենց), Յակոր Ովսաննայ, Մկրտիչ Բերեկրեցին և Թովման: Տաթևից ընդ առաջ էր եկել և Առաքել եպիսկոպոսը: Երեանում Տաթևացին վարդապետական աստիճան է տալիս Թովմային. այս մասին, թէև Թովման յայտնում է վերոյիշեալ յիշատակարանի մէջ, բայց առանց տեղի անունը տալու: Այդ պակասը լրացնում է կիրակոս բանասէրը*: Դէպքի ճիշդ ժամանակը յայտնի չէ. միայն պէտք է ՊԾԹ թուի աշնան վերջերին լինի. որովհետեւ Տաթևացին Մեծոփեցիներից բաժանուելուց յետոյ՝ միայն 36 օր ապրեց, ութ օր Տաթև հասնելուց յետոյ. նորա մահը հանդիպեց «յաւուր տօնի Նախավկային Ստեփաննոսի մեծի առաքելոյ»: Թովմայի խօսքերից (Պատմ. եր. 60), թէ՝ «անտի (Արարատեան երկրից) ելեալ գնացաք ի շնորհալից աթոռն իւր սուրբ առաքելոյն Ստաթէոսի» կարելի է եղբակացնել, թէ Թովման էլ Տաթև է գնացել իւր վարժապետի հետ: Բայց այդ կլինէր հակառակ յիշատակարանին, որի մէջ Թովման պարզ և մեկին կերպով գրում է, թէ լսել են նորա մահուան բօթը հեռուից, ողի յետ բաժանելոյն մեր ի նման է ԼԶ օր միայն եկաց ի մը ըմնի»: Եւ յիրաւի, ձեռագիրների համեմատութիւնը ցոյց տուաւ, թէ պէտք է «գնաց» լինէր «գնացաք»-ի փոխարէն և խօսքը միայն Տաթևացուն է վերաբերում**, Նոյն թուին զատկի տօնին Հաւուց Թառում վախճանուեց և Յովհաննէս Մեծոփեցին, ուր ուխտ էր գնացել «աստուածամուխ գեղարդեանն» և «պատկերի Ամենափրկչին», և Թովմայի ու վերոյիշեալ վարդապետների կողմից, որոնք նորա աշակերտներն էին, թաղուեց այնտեղ***:

* Նոր Նիւթեր. 744.

№ 1705/1768, 540ա. • № 1706/1769, 385ր.

*** Պատմ. Լանկ. 60, 61. 55. Նոր Նիւթեր. Ար. 754:

** Համ. Չեռ. № 4687/1899, 598ր.

Այստեղ վերջանում է Թովմայի կեանքի առաջին շրջանը, երբ նա մօտաւորապէս 25 տարի շարունակ վանքից վանք էր անցնում, մի վարդապետից միւսին, ժամանակի հասկացողութեամբ գիտնական կամ վարդապետական կատարելութեան հասնելու: Մենք տեսանք մասամբ, թէ ո՞րտեղ ի՞նչ էր սովորել մօտաւորապէս: Բայց Կիրակոս բանասէրը ընդհանուր խօսքերով իւր վարդապետին «միծ վարժապետ», «փառաւորեալ րարունի», «խորիմաց հոետոր», «համանման փիլիսոփային (Դաւթի)», բնորոշելուց յետոյ՝ թուում է և նորա ուսած կամ ձեռք բերած գիտութիւնները, այն է, արտաքին փիլիսոփայութեան գրքերը, «որ է Քերականն, Սահմանքն, Պորփիրն, Ստորոգութիւնքն Արիստոտելին, Պերիարմենիտսն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զհին և զնոր կտակարանացն աստուածեղէն տառիցն չ և Բ գրոց, Ծ նուրը գրոց... ԾԱ. վիսլասական պատմագիրը»*: Մեր միջնադարեան վարդապետարանների ծրագիրն էր այս, որի մասին աւելի մանրամասնութիւններ ունինք ձեռագիրների մէջ, «Արտաքին գրեանքն որի դու մտանեն այս են» վերնագրով: Բացի վերոյիշեալ եօթ իմաստասիրական գրքերից, այդ ցուցակի մէջ են մտնում Նիւսացու, Աստուածարանի, Բարսղի, Փիլոնի, Դիոնիսիոս Արիսպագացու անհւան հետ կապուած որոշ գրքեր, որոնք «Նրբեր» կամ «Նուրը գրեանք» էին կոչւում: Հին և Նոր կտակարանի «ԺԼ. մեկնիչ», ինը հին և ինը նոր կտակարանից**:

ի հարկէ, սլէտք չէ կարծել, որպէս թէ այս բոլոր գրքերն ու
գիտութիւնները Թովման ուսումնասիրել է իւր կեանքի սուաջին
կամ աշակերտութեան շրջանում։ Մի մասը նա կարող էր յետոյ
ուսումնասիրած լինել, յատկապէս Կիրակոսի շեշտած հմտութիւնը
ձեռք է ըերել նա վարդապետական աստիճան ստանալուց յետոյ,
բայց թուած գրքերի և գիտութիւնների մեծագոյն մասին նա
ծանօթ էր արդէն ուսանողութեան շրջանից։ Այս հանգամանքը
հարմ համարեցինք փոքր ինչ աւելի պարզել՝ ոչ միայն Թովմայի
գիտութեան մասին գաղափար տալու նպաաակով, այլ և թէ ա-
ռաջնակարգ վարդապետները ինչպիսի պատրաստութիւն էին
սպասում իրենց աշակերտներից, նրանց աստիճան կամ գաւազան
տալու համար։ Բացի դորանից ընծայացուն պէտք է ըերան անէր
«զգիրս ասացուածոց վարդապետական կարգի», այսպէս էր գոնէ
Գրիգոր Տաթևացու վերաբերութեամբ***, երբ նա Որոտնեցու հրա-
մանով պատրաստում էր վարդապետական գաւազան ստանալու։
(կշարունակուի)

Գարեգին Վարդապետ

* ८०१८ विलापन अंग ७३८।

** 26n. У. էջմ. № 2290/2190. 424р. Համեմ. Սուրբ զրքերի մասին. Арх. Месропъ Теръ-Мовсисяնъ. Переводъ Библіи. СП. 1902. եր. 404—495:

*** Մեծովի. Պատմ. Լանկ. 56.